Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N Ե/01/147-23 «25» 01 2023թ.

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Լալայանին

Հարգելի պարոն Լալայան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի հետ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կնքել է «Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների մատուցման պետական գնման թիվ **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7** պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի շրջանակներում, 2.4.1 կետին համապատասխան, «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն պարտավորվել է մատուցել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով նախատեսված ծառայութունները, որոնք ի թիվս այլոց, նախատեսում են սպասարկման ենթակա ավտոմեքենա(ներ)ի հետևի ցնցամեղմիչի փոխարինում:

Նշված ծառայության մատուցման համար ՀՏԶՀ-ն դիմել է 2022 թվականի դեկտեմբերի 9-ին և ստացել Ձեր համաձայնությունը այն մատուցելու 5 (հինգ) օրվա ընթացքում, այն է՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 14-ը: Սակայն, մինչև ս.թ. հունվարի 19-ը վերանորոգման ենթակա մեքենայի հետևի ցնցամեղմիչները չեն փոխարինվել: Պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջով ՀՏԶՀ-ն ևս մեկ անգամ դիմել է «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին Ե/01/127-23 գրությամբ, որին ի պատասխան ստացվել է Մ/166-23 գրությունը՝ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորության կատարման ենթադրյալ անհնարինության» մասին:

Հաշվի առնելով վերը նկարագրվածը և հիմք ընդունելով թիվ **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7** պայմանագրի **2.1.3 (բ)** ենթակետի, **5.2, 5.3 և 7.9** կետերի դրույթները կայացվել է որոշում.

1. Համարել ծառայությունների մատուցման պետական գնման թիվ **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7** պայմանագիրը լուծված.

2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0, 05% չափով, որը կազմում է **2,025** դրամ (75,000x2x27x0,0005).

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ **800,000** դրամի 0,5% չափով, որը կազմում է **4,000** ՀՀ դրամ:

Նշված գումարները խնդրում ենք սույն փաստաթուղթը հրապարակելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՏՋՀ-ի բանկային հաշվին՝ Արարատբանկ ԲԲԸ 1510032335590400:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, թիվ **ՈՀԾԳՀ-ԾՁԲ-2019/7** Պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏՋՀ-ն մտադիր է դիմել «Արարատբանկ» ԲԲԸ՝ **6,000,000** դրամ գումար ստանալու պահանջով: Տուժանքի համաձայնագրով նախատեսված գումարի պահանջը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գումարը չստանալու դեպքում, «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի տվյալները փոխանցվելու են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համապատասխան ցուցակում ընդգրկվելու համար:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն Invalid signature

Ա. Սողոմոնյան

X

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Կատարող՝ Ա. Իսախանյան
Հեռ. (010) 24 71 23/106